ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Շահումյան, 095 702854, shahumyan.hamaynq@mail.ru shahumyanhamaynq.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 փետրվարի 2021 թվականի N 05-Ա

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ժ/պ-ի առաջարկությունը՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքում 2021 թվականի համար, աղբահանության ծառայություն մատուցելու նպատակով <<Էջմիածին քաղաքի բնակարանային կոմունալ վարչության>> բյուջետային հիմնարկին համայնքի բյուջեից հատկացնել 960000 /ինը հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Շահումյան համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման սխեման՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել համայնքի ղեկավարի ժ/պ-ին /Հ.Նավասարդյան/՝ օրենքով սահմանված կարգով իրականացնել սույն որոշման 1-ին կետից բխող իրավական գործառույթները:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Ավագանու անդամներ Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼՈՅԱՆ ՍՈՆԻԿ
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԿԱՐԱՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՆՈՒՇ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ
ՍԱԴՈՅԱՆ ՔՅԱՐԱՄ
ՎԱՐԴԱՆՅԱՆ ԼՈՒՍԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Հ.Գ.ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Շահումյան
համայնքի ավագանու
2021 թվականի փետրվարի 2-ի
թիվ 1 նիստի N 05-Ա որոշման

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱՔՐՄԱՆ ՍԽԵՄԱՆ

1. Շահումյան համայնքում առկա է 220 տնտեսություն, բնակչության թիվը 1720, աղբահանվող փողոցների թիվը՝ 15:
2. Համայնքի սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 750քմ:
3. Համայնքում աղբահանություն և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվումէ ամսական 3 անգամ Էջմիածնի համայնքային <<Էջմիածին քաղաքի բնակարանային կոմունալ վարչության>> բյուջետային հիմնարկի կողմից 2021 թվականի հունվարի 1-ին կնքված <<Աղբահանության ծառայություն մատուցելու>> N01-51 պայմանագրի համաձայն:
4. Համայնքի տարածքից աղբի հավաքման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման, վնասազերծման և պահման, ինչպես նաև աղբ տեղափոխող մեքենա-մեխանիզմների աշխատանքները համակարգվում է <<Էջմիածին քաղաքի բնակարանային կոմունալ վարչության>> բյուջետային հիմնարկի կողմից:
5. Համայնքի կողմից աղբի տեսակավորում և վերամշակում չի կատարվում:
6. Համայնքում սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տարածք չկա:
7. Համայնքի տարածքում իրականացված աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ֆինանսավորվելու է համայնքի բյուջեից՝ 2021 թվականի համար 960000/ինը հարյուր վաթսուն հազար/ դրամ, այդ թվում՝ 400000/չորս հարյուր հազար/ դրամ հավաքագրվելու է համայնքի բնակիչների և 200000/երկու հարյուր հազար/ իրավաբանական անձանց կողմից, որպես աղբահանության ծառայության վճար:

Աշխատակազմի քարտուղարի ժ/պ՝ Ա.Գ.Սիմոնյան